ՋԱՆ ՎԱՐԴԱՆ 1945-2004

Ջան Վարդանը, որ Փէնսիլվանիոյ Հարիսբըրգ շրջանի յայտնի գործարար էր, 2004-ի Դեկտեմբեր 15-ին իր մահկանացուն կնքեց "Polyclinic" հիւանդանոցում:

Ջան Վարդանը տասնհինգ տարի տառապում էր կոկորդի քաղցկեղից:

Ծնուել է 1945 թուականին, Լիբանանում՝ գաղթական ծնողների ընտանիքում: Պատանի տարիքում կարճ ժամանակ աշխատում է իբրև օդանաւի մատուցող, ապա ընդունւում Բէյրութի Ամերիկեան Համալսարանի ճարտարագիտական բաժին: 1968 թուականին արտագաղթում է Ամերիկա եւ իր ուսումը շարունակում "Michigan Tech" համալսարանում: Այնուհետեւ ուսումը շարունակում է "Penn State University"-ում, որտեղից ստանում է ճարտարագիտութեան իր M.A. աստիճանը:

Ուսումնառութիւնից յետոյ Ջան Վարդանը նեռւում է առեւտրի ասպարէզ եւ 1975-ին հիմնում իր առաջին ընկերութիւնը: Նա իր բոլոր ծրագրերն ու երազները իրականացնելու համար պատրաստ էր դիմել ամէն զոհողութեան: Նրա թերեւս չիրականացած ամենամեծ ծրագիրը «Վարդանի Աւան»-ի կառուցումն էր, որ պէտք է իրականացնեն իր կինը՝ Տիկ. Մարալը, եւ աւագ որդին՝ Յովիկը, որոնց փոխանցուեց իր ժառանգութիւնը եւ որոնք պէտք է ապահովեն իր ծաւալած գործունէութեան շարունակականութիւնը:

Ջան Վարդանը ընտանիքին նուիրուած բացառիկ անձ էր: Նա յաճախ գրասենեակում աշխատելու փոխարէն նախընտրում էր տանը աշխատել, որպէսզի աւելի մօտ լինէր իր Տիկնոջը եւ զաւակներին:

Հակառակ այն իրողութեան, որ Ջան Վարդանը հիւծուել էր եւ տառապում էր անողոք հիւանդութեամբ, այդուհանդերձ, նա միշտ ջերմեռանդ մասնակցութիւն էր բերում համայնքային գործերում: Նա քաղաքի մէջ հաստատել է Վարդան Ազգային Դրամատուն եւ «Բարեւ» բացառիկ ճաշարանը: Իր նուիրատուութիւններով օժանդակել է բարեսիրական հաստատութեանց, քաղաքի բարեպարտմանը, Հայաստանեայց Եկեղեցոյ Ամերիկայի Թեմին, Արցախի հերոսամարտիկներին, 1988-ի երկրաշարժի աղէտեալներին: Նա խոշոր նուիրատուութիւններ էր անում նաեւ Հարիսբրգ քաղաքին, "Michigan Tech" համալսարանին, Ամերիկայի քաղցկեղի փորձագիտական ընկերութեանը եւ տարբեր միջազգային բարեգործական ընկերութիւններին: «Ես կարծում եմ որ իւրաքանչիւր անհատ, որ կեանքում յաջողութիւններ է ունեցել, պարտականութիւն ունի իր հարստութիւնից բաժին հանելու կարիքաւորներին եւ հիւանդներին»,- մի առիթով ասել է Ջան Վարդանը:

Ջան Վարդանը նաեւ բանաստեղծ էր եւ ստուեստի տարբեր բնագաւառի նմուշներ հաւաքող: Նա նաեւ տեսիլքի մարդ էր, ու երբեմն նրա տեսիլքները աւելի մեծ էին քան համայնքը կարող էր ակնկալել:

Ջան Վարդանը 1997 թուականից Երուսաղէմի Պատրիարքութեան Կալուածոց Մատակարարման Մարմնի ատենապետն էր: Նա իր պաշտօնավարութեան ժամանակաշրջանում կարեւոր ներդրում է ունեցել բաժանմունքի գործերում:

Փետրուարի 2-ին Ջան Վարդանի հոգւոյն ի հանգիստ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց՝ հանդիսապետութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ ..... Թուական Date ..... 17 Դեկտեմբեր 2004

Սիրելի Տիկին Մարալ
եւ հարազատներ Ճան Վարդանի

Թէեւ ոչ անակնկալ, բայց սիրելիի մը անվերադարձ բաժանումի վիշտով է որ կը ցաւակցինք, եւ "ցըտեսութիւն" կ'ըսենք՝ թանկագին մեր բարեկամին:

Իսկական հայորդի մըն էր, իր նախնիներու Մուսա Լեռան հերոսատիպ ոգիով: Դժուարութեանց դէմ յաղթահարող կամքով:

Ընտանեսէր եւ մարդասէր:

Ջեռներէց եւ հնարամիտ, չարքաշ եւ երախտագէտ հայու գիտակցութեամբ, ան իր անսակարկ նպաստը աւելցուցած է Փէնսիլվանիոյ Նահանգին, եւ մանաւանդ Հէրրիսպուրկ մայրաքաղաքին բարեկարգման ծրագիրներուն:

Նոյն ոգիով նպաստած է նաեւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Կալուածոց Մատակարարման Յանձնախումբին իբրեւ Ատենապետ, իր մատուցած օգտակար եւ ազգանուէր ծառայութեամբ:

Թէեւ ոչ-հայաբնակ ամերիկեան քաղաքի մը ընկերութեան մէջ իր ապարէզին պարտադրած կեանքի պայքարէն կլանուած, ան չմոռցաւ սակայն հայ ազգային ու հոգեւոր իր հարազատ տունը:

Իր բոլոր վարչական, տնտեսական, եւ գործնական գործառնութեանց եւ մտահոգութեանց թոհուբոհին մէջ, ան հոգիով կը վերանորոգուէր, խօսելով եւ պատմելով իր ժողովուրդի դարաւոր պատմութեան խրախուսիչ դրուագներու մասին, եւ անոր հանճարեղ գաւակներուն իրագործումներէն՝ արուեստներու եւ գիտութեան մարգերու մէջ:

Իր ստեղծագործ ժողովուրդի հոգեկան եւ հոգեւոր այս ստեղծագործութիւններուն հետ իր ունեցած հաղորդակցութենէն, իր մէջ եւս կը խմորուի շնորհը բանաստեղծ հոգիին: Եւ մենք հանոյքը ունեցած ենք մեզի ղրկածները կարդալու, եւ այդ մասին իրեն հետ խօսակցելու:

Կուզէր որ իր ոչ-հայ շրջապատը եւ բարեկամները զինքը իբրեւ հայ ճանչնային:

Կը ցանկար որ ամէն հայ, Աստուծմէ տրուած հայու այդ հոգիով իր կեանքը ապրէր:

Նոյն սիրով եւ ցանկութեամբ կը գուրգուրար իր ընտանիքի բոլոր անդամներուն եւ գաւակներուն վրայ:

Այսպիսի թանկագին եւ հայորդի բարեկամի մը հարազատներուն հետ վշտակցելով, Սուրբ Երկրի եւ Քրիստոսի անձին հետ կապուած սրբավայրերէն մեր աղօթքն է, եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մաղթանքն է, որ Աստուած ընդունի եւ հանգչեցնէ Ճան Վարդանի հոգին, անոր ընտանիքի անդամներուն պարգեւելով Սուրբ Հոգիին շնորհները, եւ զանոնք պահելով առողջ հոգիով եւ մարմինով:

Օրհնութեամբ եւ Սիրով

Թորգոմ Պատրիարք Մանուկեան

ՓՈՍՏԱՐԿՂ 14235 ՀԵՌԱՁԱՅՆ 6264853 ՖԱՔՍ 6264862 ԵՐՈՒՍԱՂԷՄ
P.O.BOX 14235 PHONE: 6264853 FAX: 6264862 JERUSALEM

digitised by A.R.A.R.@



ՃԱՆ ՎԱՐԴԱՆ (1945 - 2004)

digitised by A.R.A.R.@